



ԱՆԻԱ ԴԱՎՐԵՋԱՆ

Ես անուն չեմ

Ես անուն չեմ.

Ես զբաղվեցի այլ բաների կառուցմամբ,
որոնք անհրաժեշտ համարեցի,
ու մայրուղիներ սլացան իմ միջով,
բարակ արահետներ հազար ու մի ճամփա միացրին,
եւ ես հարմար տներ սարքեցի նրանց համար, ովքեր
գիտեն իսկական կարգը իրերի,
գիտեն ամաշելը.

Նրանք

ամպերին նայող են բոլորից հեռու,
նրանց անունը սարերում է,
ու նրանց ձեռքերը կոշտացել են աշխարհը կամովին կառուցելուց՝
ծովապատնեշներ ու կամուրջներ ծովի վրա,
հիացում նրա մեջ ապրողներին եւ ուժին նրա,
ու հավանություն:

Եւ տարածություններ դրեցի իմ մեջ, որովհետեւ շատ բան տեսա
ու նաև կոահեցի,

եւ դրանք դաշտեր են հիմա ծաղկավետ:

Քաղաքներ խաչվեցին իրար մեջ իմ մեջ,
զնալզալն ու եռուզեռը եղավ,
եւ քաղաքների կասկածը կառուցեցի,
բայց իմացա:

Եւ ջրաղացներ ու հողմաղացներ –

կոհիվ ու լոռոթյուն,
արդեն ուրախություն միայն –
քանզի ինչով երկու մասնիկ իրար կառուցված են մնում,
դատարկությունը չէ,
այլ ամպերի նման՝ նոր իրերի աշխարհ: